ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

АРАРАТСКИЙ МАРЗПЕТ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 93

<14> 12 2016թ.

ք. Արտաշատ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի ԹԻՎ 09 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2016 թվականի հունվարի 27-ի <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի ստորաբաժանման 2016-2018 թվականների ռազմավարական և 2016 թվականի տարեկան ծրագրերը հաստատելու մասին>> թիվ 09 որոշման

1. N1 հավելվածի աղյուսակի <<Դիտակի միջն. դպ. ՊՈԱԿ>> տողում <<2017>> թիվը փոխարինել <<2016>> թվով:
2. N2 հավելվածի աղյուսակը լրացնել նոր տողով հետևյալ խմբագրությամբ՝ <<Դիտակի միջն. դպ. ՊՈԱԿ Համակարգի գնահատման աուդիտ 5 14.12.2016 30.12.2016>>:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 92

12 12 2016թ.

ք. Արտաշատ

## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՁՄԵՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԸ ԵՎ 1989-1998 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԾՆՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6, 1.24 կետերով և ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի նոյեմբերի 18-ի «2016 թվականի ձմեռային զորակոչը կազմակերպելու մասին» թիվ 1224 -Ն որոշման 7-րդ կետի պահանջների՝

1.Հաստատել Արարատի մարզի /ըստ տարածաշրջանների/ տեղական զորակոչային հանձնաժողովների անհատական կազմերը՝ համաձայն թիվ 1, 2 և 3 հավելվածների:

2.Զորակոչը կազմակերպված անցկացնելու նպատակով առաջարկել Ոստիկանության Արարատի մարզային վարչությանը.

1/ Կազմակերպել զորակոչից խուսափողների որոնում և ապահովել նրանց ներկայությունը զորակոչային տեղամասեր:

2/ Ապահովել հասարակական կարգի պահպանումը զորակոչի տարածքային տեղամասերում, զորակոչիկներին հանրապետական հավաքակայան փոխադրող ավտոբուսներն ուղեկցելու համար տրամադրել ճանապարհային ոստիկանության անձնակազմեր:

3. Առաջարկել մարզի համայնքների ղեկավարներին՝ ապահովել զորակոչիկների ժամանակին և պարտադիր ներկայությունը զինկոմիսարիատ:

4.Հանձնարարել մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությանը՝ ապահովել զորակոչիկների բժշկական հետազոտությունների անցկացումը և զորակոչիկների կանխարգելիչ պատվաստումների սահմանված կարգով իրականացումը զինկոմիսարիատներին կցագրված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում:

5.Հանձնարարել մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնին՝ ապահովել զորակոչիկների փոխադրումը զինկոմիսարիատներից՝ հանրապետական հավաքակայան:

6. Արտաշատի, Արարատի և Մասիսի տարածքային զինվորական կոմիսարներին՝

1/ Ձմեռային զորակոչն անցկացնել սահմանված կարգով՝ համաձայն պլան – գրաֆիկի:

2/ Ամենօրյա տեղեկատվություն ներկայացնել մարզպետարան՝ զորակոչի ընթացքի մասին:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված 1

ՀՀ Արարատի մարզպետի

2016թ.դեկտեմբերի..12 թիվ ..92. որոշման

ԿԱԶՄ

ԱՐՏԱՇԱՏԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Ա. Մուրադյան - Արտաշատի զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ

Ս. Ատոմյան - ՀՀ ոստիկանության Արտաշատի բաժնի պետի ծառայության գծով տեղակալ

Լ. Ավետյան - Արտաշատի քաղաքապետի խորհրդական

Ա. Ղազարյան- ավագ բժիշկ, թերապևտ

Ա. Գևորգյան – սրտաբան

Գ. Գրիգորյան- վնասվածքաբան

Հ. Ավետիսյան- քիթ կոկորդ ականջաբան

Լ. Հախնազարյան- ակնաբույժ

Ն. Մինասյան- հոգեբույժ

Մ. Մնացականյան- նյարդաբան

Ռ. Սաֆարյան- մաշկավեներաբան

Լ. Ավետիսյան- բուժքույր

Ի. Կարապետյան- բժշկական հանձնաժողովի քարտուղար

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված 2

ՀՀ Արարատի մարզպետի

2016թ. դեկտեմբերի 12 թիվ 92 որոշման

## ԿԱԶՄ

## ԱՐԱՐԱՏԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Գ. Սայադյան – Արարատի զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ

Վ. Ղուկասյան – ՀՀ ոստիկանության Արարատի բաժնի պետի տեղակալ

Ա. Սարոյան – Վեդու քաղաքապետի տեղակալ

Ա. Գրիգորյան – ավագ բժիշկ, թերապևտ

Մ.Հովհաննիսյան – վիրաբույժ

Գ. Միրզոյան - նյարդաբան

Գ. Միրզոյան - հոգեբույժ

Գ. Ստեփանյան – քիթ, կոկորդ, ականջաբան

Ն. Կարապետյան - սրտաբան

Պ. Պետրոսյան – մաշկավեներաբան

Ա. Գալստյան - ակնաբույժ

Օ. Բաբայան – բուժքույր

Գ. Մարգարյան – հանձնաժողովի քարտուղար

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված 3

ՀՀ Արարատի մարզպետի

2016թ. դեկտեմբերի 12 թիվ 92 որոշման

## ԿԱԶՄ

## ՄԱՍԻՍԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Գ. Մանուկյան - Մասիսի զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ

Ջ. Թազայան - ՀՀ ոստիկանության Մասիսի բաժնի պետի տեղակալ

Գ. Ապինյան - Մասիսի քաղաքապետարանի ներկայացուցիչ

Ա. Մամյան -- ավագ բժիշկ, վիրաբույժ

Ն. Հարությունյան – թերապևտ

Հ. Այդինյան-սրտաբան

Բ. Խաչատրյան- նյարդաբան

Գ. Վարդանյան- հոգեբույժ

Ս. Նավասարդյան- քիթ կոկորդ ականջաբան

Լ. Սարգսյան- ակնաբույժ

Ս. Պողոսյան- մաշկավեներաբան

Ա. Հարությունյան - բուժքույր

Գ. Առստամյան-- հանձնաժողովի քարտուղար

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ